Առավոտ
aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 22.07.2008

# ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ

«Առավոտում» (18.07.08) տպագրված «Կռի՞վ տամ, թե՞ գիտությամբ զբաղվեմ» հոդվածում առաջ քաշված դժգոհությունների վերաբերյալ երեկ պարզաբանումներ ստացանք ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանից: ԳԱԱ օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Ալեքսանդր Գեւորգյանը դժգոհում էր, թե ակադեմիայում դիտավորյալ չեն ուզում հասկանալ իր առաջ քաշած տեսության մրցունակությունը: Նա պահանջում էր այն ներկայացնելու համար լսումներ կազմակերպել: Ռ. Մարտիրոսյանն այս կապակցությամբ «Առավոտին» ասաց. *«Նա իր նամակներում ի սկզբանե գրում է, որ իր առաջ քաշած տեսությունը ՀՀ-ում ոչ ոք չի կարող հասկանալ, էլ ի՞նչ լսումներ: Մյուս կողմից էլ, օրերս կազմակերպված կոնֆերանսից էլ լավ լսո՞ւմ: Եթե գիտնականը միտք ուներ, թող ներկայացներ եւ համոզեր, որ ինքը նոր գիտական արդյունք է ստացել: Թերթին, նախագահին, վարչապետին նամակ գրելով՝ նոր գիտություն չի հաստատվում: Նոր գիտական արդյունքը գիտնականների կողմից է ընդունվում կամ փորձնականորեն հաստատվում»:* Հետո Ռ. Մարտիրոսյանը տեղեկացրեց. *«Նամակ եմ գրել Մոսկվայի պետական համալսարանի ռեկտորին, որ քիմիայի ֆակուլտետում պարոն Գեւորգյանին զեկուցումով հանդես գալու հնարավորություն տան: Նա պիտի հետաքրքրվեր եւ գնար: Ա. Գեւորգյանին նաեւ ասել եմ, որ փնտրի-գտնի, թե աշխարհի ո՞ր գիտական կենտրոնում կարող են իրեն հասկանալ եւ գործերն ուղարկի այնտեղ: Գործուղման ծախսը ակադեմիան կհոգա»:* Ռ. Մարտիրոսյանը նաեւ նշեց. *«Օրական 2-3 նամակ եմ ստանում նոր հայտնագործությունների մասին: Ցավում եմ, որ պարոն Գեւորգյանն արդեն այդպիսի մարդկանց դասին է պատկանում, այնինչ՝ նա լուրջ գիտնական է: Աշխարհում կան հեղինակավոր ամսագրեր, թող իր հայտնագործությունը տպագրի այդտեղ: Իսկ այնտեղ տպագրվում են այն գիտական հոդվածները, որոնք խոշոր մասնագետների գրախոսությանն են դիմանում»:*

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ